


«ԹՈՂ ՏՈՒԷՐ ՄԱՆԵ ՏՂԱՅԸ ՈՐ ԻՆՇՈՒ ԳԱՆ» : ՂՈԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Ե .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 . 1876 .

ԹԻՒ 10



ԱՅՍՊԷՍ ԿԵԱՆՔ ԿԸ ՎԱՐԵՆ ԱՐԱՐԱՅԻՔ

ԿՍՐՍԻԱՆ

Վերի պատկերին մէջ տեսնուած ուղտերուն վրայի մարդիկը շին նմանիք այն մարդոց որ փոքր Ասիոյ կողմերը յաճախ կը տեսնուին և ուղտերով ջորեն կը կրեն ծովեզերքը : Մեր ճամբորդներուն գայած երկիրը փոքր Ասիոյ պէս լեռնային երկիր մը չէ, այլ ծովի պէս հարթ հաստոր երկիր մըն է, և կործես թէ ծովի պէս անասման կը տարածուի ամէն կողմ : Այն երկիրն ուսկից կ'անցնին վերալիշեալ ուղտապանները մեծ և աւզուտ անապատ մըն է : Կորստանն այնչափ մեծ է որ միւս ճայքը չը տեսնուիր : Այսպիսի կարաւաններ

ծովեզերեայ տեղերէ վաճառք կ'անեն և Արաբիոյ ներսերը կը տանին, կամ Ափրիկէի եզերքէն վաճառք կը փոխադրեն մեծ անապատին հարուային կողմը գտնուած քաղաքները : Շատ օրեր համբե, ատոր ուղտերը սօթակէզ արեւու աստն աւազուտ անապատներէն կ'անցնին քիչ կերակուր ու տեղով և աւելի քիչ ջուր լրմելով : Եթէ կամ ուր օրն անգամ մը կը հասնին դալարուէտ տեղ մը ուր ջուրի աղբիւրներ կան և հան ճամբորդներն և ուղտերը կը զովանան և հանդիստ կ'աւանտեն : Ահա այսպէս կէանք կը վարեն Արաբացիք և անոնց ուղտերն, երբ մեծ անապատին մէջ

կը ճամբորդեն : Յովսեփոյ եղբարքն, երբ անոր վրայով չար բաներ կը խորհէին, իրենց աչքերը վերցուցին և տեսան որ խումբ մը իսմայելացիք կու գային անապատէն : Ես կը կործեմ թէ այն խումբը, զոր Յովսեփոյ եղբարքը տեսան, նման էր վերի պատկերին մէջ տեսնուած կարաւանին : Սա տարբերութիւնը միայն կար, որ այն ժամանակի իսմայելացիք հրացան չուէին :

ԻՐԱՏ ԱՌ ՏՂԱՅՍ


Տղայք, ահա ձեր արձակուրդի ժամանակը լրացաւ, և ժամ է արդ վերստին սկսելու ձեր դպրոցական աշ-

խառնութիւնը, Երբ զուարճալի արձակուրդէ մը ետքը նորէն կը սկսիք գպրոց յաճախել, կ'ուզեմ ձեզ յիշեցնել թէ Աստուած մեծ բարիք պարգևած է ձեզ ուսմունք սորվելու նոր պատեհութիւն տալով ձեզ: Կ'ուզեմ նաև յիշեցնել ձեզ թէ Աստուած իրաւունք ունի ձեռնէ պահանջելու որ որչափ տարիքով մեծնաք այնչափ յառաջանաք բարութեան մէջ: Պէտք է աշխատիք և ուսմունք սորվիք, ոչ միայն ձեր ծնողաց այլ և ձեր Երկնաւոր Հօրը հաճելի ըլլալու: Անոր անբուն աչքը միշտ կը հսկէ ձեր վրայ: Անկէ խնդրեցէք որ ձեզի հաւատարիմ ընէ ձեր պարտաւորութեանց մէջ: Անկէ խնդրեցէք նաև սիրով լեցուն սիրտ մը ձեր Այսրինն և բոլոր ձեր ծանօթները սիրելու: Աստուծոյ համար դարձեցէք, Աստուծոյ համար սորվեցէք, և միշտ զԱստուած յիշեցէք: Եթէ այսպէս ընէք, վստահ եմ որ գալամիսները շատ հաճելի պիտի ըլլան ձեզ և դուք պիտի աճիք օգտակար Քրիստոնեաներ ըլլալու:

Ս Ա Ր Դ

Տղայք, կ'ուզեմ ձեզ քանի մը խօսք խօսիլ սարգերու վրայով:

Դուք տղեղ միջոտ համարելով սարգը շատ անգամ կամ կը սպաննէք զայն և կամ կը փախչիք անկէ: Բայց սարգեր կան որ զարմանալի են, սարգեր կան որ զուարճալի են, ուրիշ սարգեր ալ կան որ օգտակար են, կան նաև սարգեր որ գեղեցիկ են: Եթէ մենք աւելի խելացի ըլլայինք, թերևս պիտի կարենայիք տեսնել թէ այս բարի յաակութիւնները բոլոր սարգերուն մէջ կան: Կը թուի թէ փոքրիկ աղջիկներ ինձ կ'ըսեն. «Սարգերուն նկատմամբ ինչ որ կ'ըսես կըրնայ ուզիլ ըլլալ բայց, ըստ մեզ, աղէկ էր որ անոնց սարգերը քիչ մը աւելի կարճ ըլլային»:




ՍԱՐԴԻ ՈՍՏԱՅՆԸ

Նախ, ըսինք թէ կան սարգեր որ զարմանալի են: Գիտե՞ք թէ մանեակի մը թանկագին քարն ինչպէս կտրուած և յիշուած է, և ունի շատ մը անուններ որ լոյսը կ'անդրադարձնեն:

Նոյնպէս հասարակ սարգին աչքը չորս հազար փոքր կողմեր կամ անկիւնաւոր երեսներ ունի: Սարգն այն կողմերուն ամէն մէկովը կրնայ տեսնել, բայց այն ամէն կողմերը մէկտեղ զարով կը կազմեն միայն մէկ աչք, այն ալ այնչափ փոքր է որ զայն տեսնելու համար մօտէն և ուշադրութեամբ նայել պէտք է: Երբ կը լսէք որ սարգն ութ աչք ունի, կրնաք հասկնալ թէ ան որչափ դիւրութեամբ կրնայ տեսնել ճանճեր և մտնողներ:


Գիտե՞ք որ շերամն իր մետաքսը դուրս կը հանէ երկու փոքր ծակերէ որ անոր բերնին մէջ կան: Թեւերը զոր սարգը կը մանէ անոր մետաքսն են, բայց սարգին թեւերը դուրս կու գան ոչ թէ երկու ծակերէ, այլ հարկաւոր ծակերէ որ անոր մարմնոյն վրայ կան: Հարկաւոր թեւեր, զորս մեր աչքերը չեն զօրեր տեսնել, իրարու փոխ թուելով կը շինեն մէկ թեւ մը որով սարգն իր ստայնը կը հիւսէ:



Սարգի պոչն, որ բնականէն 500 անգամ մեծցուած է, և կը ցուցնէ Թէ Թեւերն ուսկից դուրս կու գան:

Երբ դիտենք թէ ստայնն ինչպէս շինուած է, շատ բան պիտի տեսնենք որ զմեզ պիտի զուարճայնէ: Սարգի ստայններն ընդհանրապէս պարտէզներուն առանձին թուփերուն մէջ և կամ պարապ մնացած սենեկաց առաստաղներուն վրայ կախուած կը գտնուին: Երբ սարգն ստայնը կը շինէ, նախ կը սկսի շինել այն թեւերը որ ստայնին շառաւիղները պիտի ըլլան, և սարգը կեդրոնէն դէպ ի ծայրերը կ'երթայ կու գայ: Ընդհանրապէս քսանէն մինչև երեսուն շառաւիղներ կան, և սարգն անոնց վրայէն կ'երթայ կու գայ զանոնք զօրացնելու, և ամէնքը մէկէն կը կապէ կեդրոնին մէջ: Ապա դուրսի ծայրն երթալով կը սկսի անոր բոլորաբը դառնալ, և ուր ալ երթայ թեւն իր ետևէն կը թողու, և ամէն անգամ որ ստայնին որիէ մէկ շառաւիղէն միւսին կ'անցնի, թեւը կը կապէ անոր հետ: Այս-

պէս հեռոջեռէ նեղ նեղ շրջանակներ կը շինէ մինչև որ ինքն եւ իւր թեւը կեդրոնը հասնին, և այն ատեն ստայնը վերջացած կ'ըլլայ: Ոստայնը բոլորովին մածուցիկ է, և իւրաքանչիւր թեւ խէժային նիւթով մը տամկացած է, ուստի երբ ճանճ մը թեւին դաչի, անմիջապէս անոր կողուած կը մնայ: Սարգը կեդրոնին մէջ կը սպասէ իր ճանկերն ստայնին դրեթէ անտեսանելի շառաւիղներուն մէջ դնելով: Ճանճը կ'աշխատի աղատելու, բայց զձր ջանք:



Սարգի ոտքն որ բնականէն 200 անգամ մեծցուած է:

Ճանճը ստայնին դաչելուն պէս սարգը կը հասկնայ թէ որ թեւը կ'երբայ, և այն թեւին վրայէն երթալով ճանճը կը գտնէ: Եթէ ճանճը մեծ է, սարգն իր երկայն ստրեբովը կը բռնէ զանի, և իր սուր ճանկերն անոր մարմնոյն մէջ կը խօթէ: Ճանճը շուտով յուզելէ և աշխատելէ կը դադրի, ալ մեռած է, վասն զի թուաւորուած է հեղուկով մը որ պահուած է սարգին առջի ստրեբուն մէջ: Այսպէս ճանճը սպաննելէն ետքը սարգը ճանճին գտնուած աեղին թեւերը կը կարէ, և անոր դիակը գլորելով կը փոխ թէ նոր թեւերու մէջ, և ամուր ծրար մը ընելէ ետքը, զայն իր մարմնոյն կը կապէ, և կը տանի ծածուկ տեղ մը կը պահէ, սրպէս զի ետքը զայն ուտէ:

ՃԱՄԱՆԱԿԻՆ ՊԱՏՐԱՍ ԵՂԻՐ

Յակոբին հայրը, մայրը, եղբայրը և քոյրերը պարտաւոր էին, և Յակոբին կը սպասէին քարոզ մտիկ ընել երթալու: Դանդաղն Յակոբ անդին ասդին կ'երեւար տարտամ և անորոշ: Գեռ ոչ մտաբըր սանտրած, ոչ կօշիկները մաքրած, ոչ վերաբերուն վրճնած էր: Այս միջոցին Յակոբին քոյրը, Մարիամ, տեսնելով ան կատուն որ թիկնաթուին վրայ նստած էր, «Յակոբ ինչո՞ւ կատունն պոչին կը նմանի» ըսաւ և քիչ մը ետքը յարեց. «Չէք տեսներ. վասն զի միշտ ետ կը մնայ:» Մարիամին այս խօս-

քին վրայ ամենքը ինդալ սկսան , և Յակոբ քիչ մը կարմրելով հայելին ասդին դարձաւ և շուտով լաթերն հագաւ : Բայց միւսներն ամբողջ հինգ վայրկեան սպասեցին մինչև որ Յակոբ երթալու պատրաստուեցաւ : « Յակոբ միշտ ետ կը մնայ : » Այո՛, այս է անոր թերութիւնը : Յակոբ ուրիշ տղայոց չափ գիւրաչարժ է , անոնց չափ արագ կրնայ վազել , և ցատկել , բայց միշտ ետ կը մնայ : Ծառ քիչ անգամ պատրաստ կ'ըլլայ կերակուր ուտել երթալու , երբ ուրիշները պատրաստ են : Թերևս խելքը միտքը գիրք մը կարգալու տուած ըլլալով լուսցուիլ և մազերը սանտրել մուցած է : Յաւով կ'ըսեմ թէ Յակոբ շատ անգամ դպրոցն ալ ոչ կը հասնի , վասն զի մինչև վերջն վայրկեանը կ'երկրայ անդին ասդին և ճամբայ չելեր դպրոց երթալու : Կիրակի առաւօտ ալ , գիրք կարգալով կամ ուրիշ բանի մը վրայ խորհելով ժամանակ կ'անցնէ և պատրաստ չըլլար եկեղեցի երթալու մինչև որ ճամբայ ելլելու բուն ժամանակը դայ : Այն ատեն մեծ շփոթութեան մէջ կ'իյնայ , չկրնար գըտնել այս ինչ և այն ինչ բաները , և բոլոր ընտանիքն անոր օգնելու են որ պատրաստ ըլլայ , և ընդհանրապէս ճամբան ալ ամենէն ետ կը մնայ : Արդարև Յակոբին այս սովորութիւնը շատ գէշ սովորութիւն մըն է , Ծուռ և ժիր գործելը շատ բարեք առաջ բերած և շատ կեանք ազատած է , մինչդեռ դանդաղութիւնն աւելի շատերուն կորստեան պատճառ եղած է :

տերը մնալէ ետքը , ոտորէ որսալու համար գնաց դէպ ի գեան որ իբր մէկ ժամ հեռու էր տունէն , և Պետրոսին հայրը պատուիրած էր անոր այն կողմը չերթալ : Անգամ մը Պետրոս այն կողմն երթալով մեծ վտանգի հանդիպած և շատ վտնցած էր , բայց երբ վտանգն անցաւ , վախին ազդեցութիւնն ալ չմնաց : Պետրոս խորհելով թէ գետին մօտերը շատ ոտորէ կը գտնուի , մուցաւ հօրը հրամանը և մէկէն այն կողմը գնաց ինչպէս ըսինք , այն օրը շատ անձրև եկած էր , այս պատճառաւ գետն ալ յորգած ըլլալով աւելի բուռն զօրու-

տղայ էր , մինչև այն ատեն առանց վհատելու թի կը քաշէր , բայց երբ տեսաւ որ փոթորիկ ելաւ , անոր յոյսը հատաւ և դառն արտասուք թափելով նաւակին մէջ պառկեցաւ : Առաւօտուն Պետրոս երբ քունէն արթնցաւ և շորս կողմը նայեցաւ ծովէն զատ ուրիշ բան չտեսաւ . վասն զի սաստիկ հովը , որ գիշերը փչած էր , շատ հեռուն տարած էր Պետրոսին նաւակը : Պետրոս անօթի և ծարաւ էր , ցուրտէն կը դողար , և շարունակ կ'ըսէր ինքնին , « Երանի՛ թէ հօրս խօսքը մտիկ ընէի : »

Այն օրն երեկոյեան գէտ Պետրոս շատ հեռուէն նաւ մը տեսաւ : Պետրոս սրպէս զի նաւին մէջ եղզնեալն ու շաղբութիւնն իր վրայ հրաւիրէ , բաճկոնակն հանեց և զայն թիակին դուխն անցնելով օդին մէջ բարձրացուց . սակայն նաւորդներն այն նշանը չտեսան և շարունակեցին իրենց ճամբան : Վերջապէս Պետրոս երեք օր և երեք գիշեր ծովուն մէջ մնաց , և անօթիութենէ մտրեցաւ : Ուրիշ նաւ մը որ այն կողմէն կ'անցնէր , Պետրոսի նաւակը տեսնելով զայն ազատեց : Սակայն այն նաւն ուրիշ տեղ մը կ'երթար որ հեռու էր Պետրոսի հայրենիքէն , Պետրոս երեք ամիս ետքը հագիւ կրցաւ իր տունը դառնալ : Այս փորձանքը սորվեցուց Պետրոսին թէ տղայոց համար միշտ ազէկ է իրենց հօրը խօսքին անսալ :



ՍԱԿԱՅՆ ՆԱՒՈՐԴՆԵՐԸ ԱՅՆ ՆՇԱՆԸ ՁԵՍՄԱՆ

թեճրոս ՀՕՐԸ ՀՆՏԱԶՆԵՒ ԸՂԱՍԿ ԿԸ ՍՈՐՎԻ


Օր մը որ՝ առաւօտէն ի վեր սաստիկ անձրև կը տեղար , Պետրոսի սիրտը շատ կը նեղուէր : Ուստի իրիկուան դէմ երբ օդը բացուեցաւ , Պետրոս շատ ուրախ եղաւ , և նաւակն ստաւ թի քաշելով զբօսանք ընելու համար : Բաւական ատեն տանը մօ-

թեճամբ կը թափուէր ծովը : Պետրոսին նաւակն երբ գետին բերանին մօտ եկաւ , շուրերը սաստիկ զօրութեամբ զայն դէպ ի ծովը քշեցին ասարին : Պետրոս առաջ չէր գիտեր թէ առջևը հոսանք կայ , բայց երբ տեսաւ որ նաւակն առաջ չէր քաշեր բոլոր զօրութեամբ աշխատեցաւ հասնելին բռնութեանը դէմ գնելու , բայց ի զուր : Տղայք , գուք արդէն գիտէք որ փոզոցներէն վազող առուններն ինչպէս գիւրութեամբ և արագութեամբ կը տանին տախտակի կտորները զոր գուք ջրերուն մէջ կը նետէք : Գետին շուրերն այնպէս արագ տարին Պետրոսի նաւակը , երեկոյ եղաւ , և փոթորկայոյց հով մը փչել սկսաւ : Պետրոս քաջատիրա-

ԽՕՍՈՂ ԹՈՒՂԹ

Խաղաղական ավիանոսի Բանարի կղզւոյն բնակիչներէն սմանք երբ քիչ մը կարգալ և գրել կը սորվին , շատ ուրախ կ'ըլլան : Երբեմն անոնք նամակ կը գրեն իրենց բարեկամաց , և նամակը տանելով կը կարգան զայն : Յիշեալ կղզւոյն բնակիչները երբ բնաւ գրել կարգալ չէին գիտեր նամակը խօսող թուղթ կանուանէին և շատ կը զարմանային թէ թուղթն ինչպէս կը խօսի : Անգամ մը միտինար մը չորս ձմերուկ

զրկեց ուրիշ միտու-
նարի մը որ կըլլէ-
ւոյն միւս կող-
մը կը բնակէր :
Չմերուկը տանող
մարդն , որ տեղացի
էր , ճամբան յոգ-
նեցաւ և ծարա-
ւէն կը սանջուէր ,
ուստի խորհեցաւ
ձմերուկներէն մին
ուսել : Եւ նամա-
կը քարի մը տակ
պահեց սրպէս զի



մը ժողոված է այն
չէնքին տեղը : Մէկ
կողմը կը կենան մար-
դիկ , որոնց զգեստին
ձեւն կը հասկցուի
թէ Հրեայ քահանայք
են : Յիշեալ քահա-
նաներէն իւրաքան-
չիւրն իր ձեռքը փող
մը բռնած է : Միւս
կողմը կեցած են ու-
րիշ խումբ մը մար-
դիկ , որ առաջիննե-
րուն պէս հագուած

չտեսնէ ձմերուկն ուսելը : Յիշ-
եալ անձն երբ ձմերուկներն և նա-
մակը միսինմարին առաւ , միսինմարն
անոր հարցուց , « Ո՞ր է միւս ձմերու-
կը , չորս ձմերուկ զրկուած է : » Խեղճ
մարդը շատ զարմացաւ , և նամակը
յուցնելով ըստ , « Ի՞նչպէս այս
թուղթը կրնայ քեզ բռնել , ան չտեսաւ ,
երբ ես ձմերուկը կերայ : »

ՉՈՐՍ ՊՍՏՃԱՌՆԵՐ

Չորս տղայք զիշերթիկ վարժարան
մը ընդունուեցան իբրև ուսանող : Ա-
նոնցմէ իւրաքանչիւրին հարցուցի թէ
ի՞նչ նպատակաւ վարժարան կ'երթայ :

Առաջին տղան պատասխան տու-
աւ և ըստ թէ , ինքը վարժա-
րան կ'երթար վաղն զի հայրն այն-
պէս հրամայած էր : Երկրորդ տղան
պատասխան տուաւ և բտա թէ , ինքը
վարժարան կ'երթայ , վառն զի իր ըն-
կերը հոն կ'երթայ : Երրորդ տղան
պատասխանեց թէ , ինքը վարժարան
կ'երթայ վառն զի կ'ուզէ առաջին եր-
կու տղայոց հետ ըլլալ :

Չորրորդ տղան ըստ . « Ես վար-
ժարան կ'երթամ , վառն զի ուսմունք
սորվել կ'ուզեմ : Թէև հայրս չկրնար
շատ ստակ վճարել , բայց ես արձա-
կուրդի ատեն կրնամ գործ գտնել .
և պիտի ջանամ ամէն կերպով աշ-
խատիլ և քրտնիլ որչափ կարելի է
լաւագոյն կրթութիւն մը առնել
վարժարանին մէջ :

Այս չորս տղայքներէն որն պիտի
յաջողի , և որն ամենէն աւելի ուս-
եալ և պատուաւոր պիտի ըլլայ : Ես
կը կարծեմ թէ վերջինը :

ԹՈՒՂԹ ՇԻՆԵԼ

Ըսինք թէ ցնցոտիներն երբ կտոր
կտոր կ'ըլլան , կը լաւացուին և ջուրի
մէջ կը բլբլատուին , ալ իսրայիլ խառնուած
ջուրի նման կ'ըլլան : Խիւսի (լափա)

պէս բան մը կ'ըլլան : Այս խիւսը
լաւաւ մեքենաներէն խողովակի մը
մէջ , զոր վերի պատկերին աջ կողմը
կ'տեսնէք : Այս առջին մէջ գործիք
մը կայ որ Խուկը կոչուի , և շարունակ
կը խառնէ խիւսը : Խիւսը տաշտին
տակի ծորակէ՛ կ'անցնի փայլուն պղն-
ձէ ամանի մը մէջ որ շատ բարակ ծա-
կիւր ունի , և այն ծակերէն ալ խիւսը
կը վազէ բարակ մետաղեայ թելերէ
հիւսուած վանդակի մը վրայ , որուն
մէկ մասը կ'երեւի վերի պատկերին
մէջ երկու մարդոց քովը : Խիւսը վե-
րը յիշուած մետաղեայ վանդակին
վրայ իյնարուն պէս , հնոցէ մը սաստիկ
հով մը կը փչէ , և խիւսը շատով չոր-
նալով ճերմակ նիւթ մը կ'ըլլայ :
Մետաղեայ վանդակը միշտ կը շարժի ,
և երբ կէս չորցած խիւսը վանդակին
ծայրը գայ , կ'անցնի թաղիքէ մեծ
թերթի մը վրայ , որ կամոց կամոց
կը շարժի : Թաղիքը կէս չորցած խիւսը
կը տանի գլաններուն տակը , որ կամոց
մը կը սեղմեն կամ կը քամեն զանի և
ուսելի կը չորցնեն և երբ խիւսը կը
հասնի երեք խոշոր գլաններուն որ
մեքենային ձախ կողմը կը կենան ,
ալ խիւս չէ , այլ թաց թուղթ է :
Երեք խոշոր գլանները բաւական տաք
են , և թաց թուղթը կը չորցնեն :
Ուրիշ աւելի փոքր գլան մը , որ պատ-
կերին ծայրը կը տեսնուի , կը գարտէ
չորցած և պատրաստուած թուղթն
երբ մեքենայէն դուրս կ'իլլէ : Հիմա
կրնար գիտնալ թէ թուղթն ինչպէս
կը շինուի :

են , և իրենց ձեռքն ունին այնպիսի
տաւիղներ , որ ըստ Հրէական սովո-
րութեան ստատուածային պաշտօնի
մէջ կը գործածուէին : Ահա երգ մը
կը սկսի երգուիլ նախ այն կողմէն
որ քահանայք կը կենան , նոյն երգը
կը կրկնուի միւս կողմէն , և այսպէս
արձագանդ առնելով երգին ուրա-
խութեան ձայնը կը լինի օգը : Քիչ
մըտաքը ժողովրդեան խնդութեան
ձայներն և ալ լաւ խաները կը խառ-
նուին այն երգին հետ :

Բայց այս ուրախութեան մէջ շատ
տխոր գլուխներ ի խոնարհ նայելով
կ'արտասուեն , եւ քանի որ խնդու-
թեան ձայները կը բարձրանան , միւս
ներուն լալու և հառաչանայ ձայնը ,
հեծութեան և սղբոց աղաղակն աւելի
լսելի կ'ըլլայ երգոց ուրախական
ձայներուն մէջ : Մարդ չկրնար որչէլ
թէ այն աղաղակը ուրախութեան
կամ լալու ձայն է :

Ի՞նչ չէնք էր այն որուն հիմերը
կը գրուէին : Որո՞նք էին շինողները :
Որո՞նք էին այն ձերուները որ ուրա-
խութեան մէջանել կու լային : Այս
պատմութիւնն ո՞ր կը գտնուի :

**ԱՆՅԵԱԼ ԱՄՍՈՑ ՀԱՐՅՄԱՆՑ
ՊԱՏԱՍԻԱՆ**

Պատկերին մէջ տեսնուած դէպքը
բեթէլի մօտերը տեղի ունեցաւ :
Դիակը որ կը տեսնուի Աստուծոյ
անհնազանդ մարգարէին գիտին է :
Այս պատմութիւնը կը գտնուի Բ
Թագ . ԺԳ . 11—32 համարներուն մէջ :

Ամերիկայի միսինմարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ . Բ . ԿԻՒՆ
Ֆիլանսմըրազ հոգաշու , Ամերիկան խան

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԵՆԵՆ
Չազմագնար , Յակոբեան խան , Թիւ 12 .

**ՍՈՒՐԲ ԳԵՐԲ ԿԱՐԳԱՅՈՂ ՓՈՒՐ ՏՂՈՑ
ՀԱՄԱՐ ՊԱՄՄՈՒԹԻՒՆ**
Մեծ շէնքի մը հիմերը կը գրուին ,
և այս պատճառաւ մեծ բաղմու թիւն